«Հաստատում եմ» ________

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր Ե. Սերոբյան

«12» մարտի 2024թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լիլիթ Հրանտի Ամիրջանյանի «Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան գեղարվեստական կրթօջախներում» վերնագրով ԺԳ.00.02 թվանիշով, «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

«Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան գեղարվեստական կրթօջախներում» թեկնածուական ատենախոսության արդիականությունը հիմնավորված է, որը պայմանավորված է արդի ժամանակահատվածում գեղարվեստական կրթության դերի արժևորման, ազգային մշակութային ժառանգությունը ճանաչելու, պահպանելու կարողությունների զարգացման, մատենական գեղանկարչության կատարողական արվեստի տեխնիկայի և ուսուցման մեթոդիկայի մշակման անհրաժեշտությամբ:

Ձևակերպված է հիմնախնդիրը, որոշված է նպատակը, ձևակերպված են մի շարք խնդիրներ, որոնք միասնաբար ամբողջական պատկերացում են տալիս կատարված հետազոտական աշխատանքի մասին: Սահմանված են հետազոտական աշխատանքի բոլոր բաղադրիչները, դրանք փոխպայմանավորված և փոխկապակցված են:

Ատենախոսության առաջին «Գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման տեսական-մեթոդաբանական հիմքերը» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը» խորագիրը կրող առաջին ենթագլխում մանրամասնորեն ներկայացված են մատենական գեղանկարչության որպես ուսումնական առարկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը: Այս ենթագլխում արված են համապարփակ ուսումնասիրություններ, վերլուծություններ քննարկվող հարցի վերաբերյալ, մասնավորապես անդրադարձ է կատարվել հայոց այբուբենի գյուտի և Աստվածաշնչի հայերեն թարգմանության, հայկական դպրոցների, գրադարանների, վանքերի և դրանց կից գրչատների հիմնադրման, Հայաստանում դեռևս նախաքրիստոնեական ժամանակաշրջանում ձևավորված գեղանկարչական արվեստի համակարգի առկայության և այլ հարցերի քննարկմանը: Հարկ է նշել, որ հեղինակը վերոնշյալ հարցերի ուսումնասիրության, վերլուծության արդյունքում ներակայացնում է ամփոփումներ՝ ինքնուրույն մեկնաբանությամբ: Տրվել են մատենական գեղանկարչության դասավանդման մեթոդիկայի սահմանումն ու նպատակադրումը: Սահմանվել են մատենական գեղանկարչության դասավանդման խնդիրները:

Երկրորդ ենթագլխում՝ «Մատենական գեղանկարչության ոճական և կատարողական առանձնահատկություններն ու ընդհանրությունները միջնադարյան Հայաստանի տարբեր կրթօջախներում», վերլուծվել են միջնադարյան Հայաստանի մանրանկարչական արվեստի երկու հիմնական ուղղությունները՝ ժողովրդականն (Վասպուրականի դպրոց) ու ազնվականականը (Կիլիկյան դպրոց), բնութագրվել են նրանց ոճական և կատարողական առանձնահատկությունները, ընդհանրությունները: Ամենայն մանրամասնությամբ լուսաբանված են Հայաստանի մանրանկարչական տարբեր դպրոցներում ընդունված պատկերագրական կանոնները, սկզբունքները և պատկերագրման եղանակների առանձնահատկությունները: Գնահատելի է, որ աշխատանքում ներկայացված է հարուստ տեղեկատվություն տարբեր ժամակաշրջաններում հայ մանրանկարիչների ստեղծագործությունների մասին, ինչը վկայում է ուսումնասիրվող հարցի վերաբերյալ հետազոտողի իրազեկվածության բարձր մակարդակի մասին:

Երրորդ ենթագլխում, որը կրում է «Հայկական մատենական գեղանկարչության ուսուցման միջնադարյան և ժամանակակից սկզբունքների, մեթոդների և տեխնիկաների համեմատական վերլուծությունը» խորագիրը, բնութագրվել են հայկական մանրանկարչական արվեստի ուսուցման միջնադարյան և ժամանակակից սկզբունքները, մեթոդները, այդ թվում՝ ատենախոսի հեղինակային մեթոդներն ու տեխնիկաները, ներկայացված են նրանց առավելություններն ու արդյունավետությունը: Լուսաբանվել են տարբեր տեխնիկաներ, աշխատանքների իրականացման համար կանոններ, փուլեր, հաջորդական քայլեր, որոնք ուղեկցվում են օրինակներով, դրանք պարզաբանվել են ամենայն մանրամասնությամբ: Սահմանվել են նոր եզրույթներ, որոնք գործածական կլինեն մասնագիտական ոլորտում:

Ատենախոսության «Գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի փորձարարական հիմնավորումը» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Ուսուցման գործընթացում սովորողների մանրանկարչական գիտելիքների, կարողությունների և կատարողական հմտությունների արդյունավետ զարգացման մեթոդիկայի բնութագիրը», սահմանվել են մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկայի կառուցվածքային բաղադրիչները, դրանց բնութագրերը, դիտարկված են մատենական գեղանկարչության ուսուցման ավանդական և ժամանակակից մի շարք փոխներգործուն մեթոդներ, տեխնոլոգիաներ, տրվում են պարզաբանումներ, որոնք երկու գծապատկերների միջոցով ներկայացված են ենթագլխում: Ուշագրավ դիտարկումներ են ներկայացված հորինվածքների կառուցման ձևի, եղանակների վերաբերյալ, որոնք բնորոշվում են հայկական մատենական գեղանկարչության առանձնահատկությունների հաշվառմամբ:

Այս ենթագլխում ներկայացված են մանրանկարչական արվեստում սովորողների գծանկարչական, գեղանկարչական կատարողական և ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացմանը նպաստող մեթոդներ, որոնց կիրառման նպատակով դասավանդողներին ներկայացվում են հիմնավորված պահանջներ:

«Մատենական գեղանկարչության ուսումնագործնական առաջադրանքներ» խորագիրը կրող երկրորդ ենթագլխում վերլուծության են ենթարկվում ուսանողների կողմից մանրանկարչական կատարողական արվեստի տեխնիկական սկզբունքների, եղանակների յուրացման, գործնական կիրառման ու տիրապետման, ինչպես նաև ստեղծագործական կարողությունների զարգացման հարցերը: Հեղինակի կողմից նախագծվել են առաջադրանք-վարժություններ, որոնք վերաբերում են գծանկարչական, գեղանկարչական տեխնիկաների, գեղարվեստական, կերպարային մտածողության և երևակայության զարգացմանը, ներկայացված են նաև հորինվածքի ստեղծման կառուցողական, ստեղծագործական և սովորողների գեղագիտական ճաշակի բարձրացման, արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման նպատակով նախագծված առաջադրանք-վարժություններ:

Երրորդ ենթագլխում «Մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի արդյունավետության ստուգումը և արդյունքների վերլուծությունը», սահմանվել են մանկավարժական փորձարարության հիմնական խնդիրները: Ներկայացված է գեղարվեստական կրթօջախներում «Մատենական գեղանկարչություն» դասընթացի ուսուցման փորձարարական ծրագիրը: Սահմանվել են մանրանկարչական արվեստում սովորողների ընկալողական-վերարտադրողական, գծանկարչական, գեղանկարչական կատարողական տեխնիկական և ստեղծագործական կարողությունների գնահատման չափանիշները: Անցկացվել է փորձարարական աշխատանք, բնութագրվել է փորձարարության ընթացքը: Անցկացվել են հարցումներ՝ ուղղված գեղարվեստական կրթօջախներում մանրանկարչություն դասավանդողներին և սովորողներին: Կատարվել է հարցման արդյունքների վերլուծություն. դրանք ներկայացված են տրամագրերի տեսքով: Մանկավարժական փորձարարական աշխատանքի արդյունքում հեղինակի կողմից մշակված մեթոդիկայի արդյունավետությունը հիմնավորված է, և այն կիրառական նշանակություն կստանա գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացում:

Աշխատանքն ավարտվում է եզրակացություններով, որոնք բխում են գիտական հետազոտության տրամաբանությունից, դրանք փոխկապակցված և փոխպայմանավորված են՝ արտացոլելով հետազոտական աշխատանքի շրջանակում առաջադրված խնդիրների լուծումները:

Հղումները համապատասխանում են գրականության ցանկին:

Թեկնածուական ատենախոսության վերաբերյալ հրատարակվել է 20 գիտական հոդված:

Լիլիթ Հրանտի Ամիրջանյանի «Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան գեղարվեստական կրթօջախներում» խորագրով հետազոտական աշխատանքի ընթացքում բացահայտվել են գեղարվեստական կրթօջախներում սովորողների մատենական գեղանկարչության կատարողական արվեստի տեխնիկայի տիրապետման խնդրում առկա դժվարությունները, մշակվել են մանրանկարչական գիտելիքների, կատարողական կարողությունների, հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ձևերի, մեթոդների, միջոցների, տեխնոլոգիաների համալիր, և սահմանվել են դրանց արդյունավետ կիրառման մանկավարժական պայմանները:

Նշենք որոշ դիտարկումներ հետազոտական աշխատանքի վերաբերյալ.

1. Աշխատանքի գլուխները կարելի էր ավարտել ամփոփումներով:
2. Տարբեր տեխնիկաների զարգացման առաջադրանք-վարժությունների ներկայացման ընթացքում կարելի է անդրադառնալ տարիքային տարբեր խմբերի հետ այդ տեխնիկաների կիրառման առանձնահատկություններին, առաջադրանք-վարժություններին:
3. Կարծում ենք փորձարարական աշխատանքների իրականացման ընթացքում ևս կարելի էր անդրադառնալ տարիքային տարբեր խմբերի հետ իրականացված աշխատանքներին՝ ընդգծելով որոշ ընդհանրություններ, տարբերություններ:
4. Էջ 36-ում նշված է հավելված 12-ի մասին, մինչդեռ աշխատանքում առկա է 11 հավելված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված նկատառումները չեն ստվերում սույն հետազոտության գիտական արժեքը: Կատարված է համապարփակ հետազոտական աշխատանք, այն ունի ոչ միայն գիտամանկավարժական, այլև պատմամշակութային, հայապահպան բացառիկ, կարևոր նշանակություն:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Լիլիթ Ամիրջանյանի կողմից հայցած ԺԳ.00.02-«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2024թ. մարտի 11-ի Մանկավարժության ամբիոնի թիվ 10 նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ա. Մկոյանը, Ռ. Մարդոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ, թեկնածու Շ. Ալեքսանյանը, Մ. Ղալաչյանը, Ա. Զաղոյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ կ.գ.թ., դոցենտ՝ Կ. Պետրոսյան